

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«___» _____ 2022թ.

N _____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով Երևան համայնքին փոխանցվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը և դրանց վրա առկա շենք-շինությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշման անբաժանելի մաս կազմող հ.հ.1, 2, 3 հավելվածների:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշման 2-րդ կետով սահմանված նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է որպես նվիրատվություն ընդունել ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով Երևան համայնքին փոխանցվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը և դրանց վրա առկա շենք-շինությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Երևան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը Երևան համայնքին սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին» հ.662-Ա որոշմամբ Երևան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության կողմից Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում որպես սեփականություն ձեռք բերված հողամասերից 8.131801հա, որից՝ բնակավայրերի հողերի՝ 6.405204հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ 0.067987հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ 1.65861հա և դրանցում առկա՝ իրենց նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործման համար ոչ պիտանի շենքերը, շինությունները, սեփականության իրավունքով անհատույց տրամադրվել են Երևան համայնքին՝ համաձայն որոշման անբաժանելի մաս կազմող հ.հ.1, 2 և 3 հավելվածների:

ՀՀ կառավարության վերը նշված որոշման 2-րդ կետով լիազորվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահը մեկամսյա ժամկետում Երևանի քաղաքապետի հետ կնքել գույքերի (հողամասերի և դրանցում առկա շենքերի, շինությունների) նվիրատվության պայմանագրեր:

Նկատի ունենալով վերը շարադրվածը, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի հ.662-Ա որոշման կատարումն ապահովելու համար ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՁՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ.ՍԱՐԳՍՅԱՆ